

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԵՄՈՒԱՐԱՅԻՆ ԳԻՒԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՐԱՆԻՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԻ ԻՆՔՆԱԿՆՍԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՐԿԱՐԻՏ ԱՍԼԱՅԱՆ

1792 թ. լոնդոնում լույս տեսավ Հ. էմինի մեմուարների գիրքը՝ «Հայ-ազգի Հովսեփ էմինի կյանքն ու արկածները՝ գրված նրա իսկ կողմից անգլերեն լեզվով»¹ վերտառությամբ: Ցարդ այդ գիրքը ուսումնասիրվել է սոսկ որպես պատմական փաստաթուղթ, որից տեղեկություններ են բաղել հայ ժողովրդի լուսավորության և ազատագրության ականավոր մարտիկ Հ. էմինի կյանքի ու գործունեության վերաբերյալ²: Հ. էմինի երկի՝ որպես XVIII դ. հայ մեմուարային գրականության յուրօրինակ նմուշի, գրական կողմը սպրդել է ուսումնասիրողների տեսադաշտից, չնայած այն բանին, որ թե՛ իր բովանդակությամբ և թե՛ պրոբլեմատիկայով Հ. էմինի մեմուարները հանդիսանում են հայ իրականության ծնունդը: Մյուս կողմից, Հ. էմինն իր գիրքը գրել է անգլերեն և հրատարակել լոնդոնում: Նրա աշխատությունը ներթափանցված է անգլիական լուսավորության գաղափարներով և, ինչպես ցույց է տալիս համադրական ուսումնասիրությունը, այն սերտորեն կապված է XVIII դ. անգլիական մեմուարային գրականության և լուսավորական արձակի հետ:

XVIII դ. անգլիական մեմուարային գրականության ծաղկման շրջանն էր: Հ. էմինի գրառումներից երևում է, որ նա կարդացել էր ոչ թիչ թվով նշանավոր մարդկանց կենսագրություններ և ինքնակենսագրություններ: Նրա գրքում հիշատակված են Վոլտերի «Պետրոս I-ի պատմությունը» և «Կարլ XII-ի պատմությունը»:

Հ. էմինի վկայակոչումներից և ակնարկումներից կարելի է եզրակացնել, որ նա լավ գիտեր Ցիցերոնի՝ լոնդոնի իր բարեկամ է. Էներքի սիրած գրողի, կենսագրությունը: Նրա իրազեկության աղբյուրը կարող էր լինել նաև Կալկաթայի Գերագույն դատարանի անդամ, նշանավոր արևելագետ Վ. Ջոնսը, որի հետ էմինը հաճախ էր շփվել, որն ինքը Ցիցերոնի երկրպագուն էր և աշխատություն էր գրել հռոմեացի հոետորի մասին: Չի բացառվում նաև, որ Հ. էմինը տակավին լինողիայում կարդացել էր Ցիցերոնի մասին Միդլտոնի ադուկ հանած գիրքը³, քանի որ Հ. էմինին հովանավորող լորդ Լիթլտոնը հիացած էր այդ գրքով և նրանով ոգևորված՝ գրել էր Ցիցերոնի թաղաքական գործունեության և փիլիսոփայության վերլուծությունը⁴:

¹ The Life and Adventures of Joseph Emin an armenian written in English by himself, London, 1792. Այսուհետև՝ „Adventures of Emin“.

² А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, Ереван, 1943.

³ Middleton C., The History of the life of Marcus Julius Cicero, London, 1741.

⁴ Littleton G., Observation on the life of Cicero, London, 1774.

Հ. էմինը ծանոթ էր նաև Ժ. Շարդենի, Զ. Հենվելյի մեմուարներին, Ֆրիդրիխ Մեծի, Նադիր շահի կենսագրություններին։ Հ. էմինը կարդացել էր Նադիր շահի կենսագրության հայերեն թարգմանությունը, որը հրատարակվել էր Մադրասում՝ 1783 թ.։ Բայց հնարավոր է նաև, որ նա ավելի վաղ կարդացել էր այդ գրքի անգլերեն բնագիրը, որը հանդիսանում էր Զ. Հենվելյի ծավալուն աշխատության մի մասը⁵։ Հ. էմինը ծանոթ էր ականավոր գորահրամանատարների կենսագրություններին, ինքնակենսագրության մեջ և նամակներում նա վկայակոչում է «Սաքսոնացի մեծ մարշալի» ասույթները⁶։ Բացի այդ, Հ. էմինը Ս. Զոնսոնի կենսագրական ակնարկները կարդացել էր նրա հանդիսներում, որոնք հրատարակվում էին 50—60-ական թվականներին։ Կասկածից վեր է, որ անգլիական կենսագրական գրականության հետ Հ. էմինի ունեցած ծանոթությունը չի սահմանափակվում նշված ցուցակով։ Հ. էմինի կյանքի նկարագրությունը իր ձևով մոտիկ է անգլիական ինքնակենսագրական գրականության վաղ շրջանի գործերին։ Անգլիայում կենսագրական գրականության զարգացման արշալույսին զրեթե ոչ մի «արբերություն չկար ինքնակենսագրությունների և մեմուարների միջև, քանի որ ինքնակենսագրությունների հեղինակները ուղադրությունը կենտրոնացնում էին ոչ թե իրենց ապրումների, զգացմունքների, մտքերի վրա, ինչպես դա տեղի ունեցավ հետագայում, այլ մեմուարիստների նման՝ նրանք ևս ավելի շատ պատմում էին իրենց գործունեության, ինչպես նաև այն մարդկանց մասին, որոնց հետ հանդիպումներ էին ունեցել և այն իրադարձությունների մասին, որոնց վկաներն էին եղել իրենք։

Վաղ շրջանի անգլիական ինքնակենսագրությունները ըստ մեծի մասին վերաբերում էին կատարած գործերին։ Սովորաբար պետական գործիչները հիշողություններ էին թողնում իրենց պատմական, քաղաքական գործունեության վերաբերյալ, նրանք պատասխանում էին «Ի՞նչ ես արել» հարցին։ Նրանցում, որպես կանոն չէր կարելի գտնել «Ի՞նչ ես մտածել», կամ «Ի՞նչ ես ողացել» հարցերի պատասխանը։

XVII դ. գերակշռում էին պատերազմի մասնակիցների հիշողությունները, ինքնակենսագրությունների այն նոր տեսակը, որը երևան եկավ 1700 թ. հետո, դա քաղաքագետների մեմուարներն էին, ինչպես, օրինակ, Կլարենդոնի, Մեյվիլի և այլոց գրքերը։ Անգլիական վաղ շրջանի կենսագրություններում անհանդուրժելի էր մի մարդու կյանքի պատկերումը, որը նշանակալից դեր չէր խաղացել քաղաքականության մեջ կամ չէր եղել զինվորական։ Այն բանի գիտակցումը, թե ամեն մի մարդու կյանքն ինքնին հետաքրքիր է և կարևոր, ի հայտ եկավ ավելի ուշ։ Մինչև Դավիդ Յումի ինքնակենսագրական ակնարկի և է. Գիբոնի մեմուարների երևան գալը ինքնակենսագրությունը ևս արժեքավոր էր համարվում, եթե այն ուներ պատմական կամ խրատատու նշանակություն։ Կենսագիրներին ժամանակ առ ժամանակ անվանում էին նաև պատմաբաններ։ Կենսագիրները գտնում էին, որ մարդու կյանքը կարելի է ընթերցողի ուղադրությանը արժանի դարձնել

⁵ Գիտենք, որ Հ. էմինը նրա հեղինակի հետ ծանոթացել է զեռու լոնդոնում, Զ. Հենվելյը օգնել էր նրան 1761 թ. ոռոսական զեպան, իշխան Գուլիցինի միջոցով ձեռք բերելու անձնագիր՝ Ռուսաստան մեկնելու համար։

⁶ «Adventures of Emin», էջ 90, 461։

միայն պատմական իրադարձություններին աղերսելու միջոցով:

Հ. Հմինն ընտրել էր «Կյանքը և արկածները» ձևը, նկատի ունենալով ոչ միայն դարաշրջանի պատմական իրադարձություններին՝ Յոթնամյա պատերազմին, Սևն-Մալոյի վրա անգլիական դորբի արշավանքին իր ունեցած մասնակցությունը կամ հանդիպումները պատմական այնպիսի անձնավորությունների հետ, որպիսիք էին Ուիլյամ Պիտը, դուքս Մալբորոն, Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ II-ը, վրաց թագավոր Հերակլը, կանցլեր Վորոնցովը, Հնդկաստանի ղեկավար-նահանգապետներ Ուորեն Հաստինգսը, Մակ-Ֆերսոնը, Շոուն և ուրիշներ, այլև, զիսավորապես, այն պատճառով, որ գիտակցում էր իր գործունեության պատմական ու համազգային նշանակությունը:

Նրա գիրքը որոշումը դրսևորվել է զրբի և փաստերի ընտրության մեջ և կառուցվածքում: Քաղաքագետների, պետական գործիչների, ղեկավարականների բազմաթիվ կենսագրությունների նման Հ. Հմինի գրքում ևս դեռահասության ու պատանեկության տարիները խստիվս կրճատ են ներկայացված, այն հաշվով, որպեսզի հեղինակը ավելի արագ ձեռնամուխ լինի հասուն տարիների և գործերի նկարագրությանը:

Հ. Հմինի մեմուարների սկիզբը հակիրճ, բայց և դրամատիզմով լի մի պատում է Պարսկաստանում նրա ընտանիքի ճակատագրի, այդ ընտանիքի՝ անվտանգ ապաստարան գտնելու համար տեղից-տեղ կատարած թափառումների մասին: Շահ-Աբասի իշխանության տարիներին Հ. Հմինի պապի պապը ստիպված է հղել թողնել հայրենի գավառը և հաստատվել Համադանում: Համադանից, որը 1722 թ. գրավել էր Ահմեդ փաշան, Հ. Հմինի ընտանիքը բռնի կերպով տեղափոխվել է Բաղդադ: Այստեղ, նադիր Կուլի խանի կողմից քաղաքի իննամսյա պաշարման ժամանակ, սովից մահանում են Հ. Հմինի մայրն ու եղբայրները: Նրա ընտանիքը Բաղդադից կրկին վերադառնում է Համադան, իսկ այստեղից անցնում հորասան: Մեծ դեր-դաստանից կենդանի է մնում միայն մի քանի մարդ: Հ. Հմինի հայրը տեղափոխվում է Հնդկաստան:

Այս պատումը, որը բնորոշում է հայ ընտանիքների մեծամասնության ճակատագիրը արևելյան բռնատիրության պայմաններում, նպատակ ունի ընթերցողին նախապատրաստելու այն բանին, որ նա ընկալի հերոսի հետագա գործողությունները: Այդ պատճառով էլ ընթերցողը բուրբոնվին էլ չի դարձանում, երբ հրետասարդ Հ. Հմինը ընդունում է հաստատու որոշում՝ մեկնելու Անգլիա, որպեսզի այնտեղ, տիրապետելով եվրոպացիների ռազմական արվեստին, հարստանալով նրանց լուսավորությամբ, իրեն նվիրի հայրի հոգևոր և ֆիզիկական ազատագրմանը: Իր կյանքի հետագա նկարագրության մեջ Հ. Հմինը կանգ է առնում միայն այն էպիզոդների վրա, որոնք պատկերում են նրա ուղին դեպի քաղաքական ու լուսավորական նվիրական նպատակը: Մեմուարները փաստորեն ավարտվում են այնտեղ, ու նկարագրում է իր վերջին անհաջող փորձը՝ ձեռք բերելով հարուստ մադրասահայրի աջակցությունը, մեկնել Հայաստան և կազմակերպել մարտունակ ուժերին: Իր անձնական կյանքին վերաբերող հանգամանքներին, որոնք հետում են վերահիշյալ իրադարձություններին, հատկացված է ընդա-

մենը մի քանի էջ: Դրանք կազմում են զրբի հակիրճ, հապճեպ գրված վերջաբանը:

Այսպիսով, կառուցվածքային առումով մեմուարներն արտացոլում են Հ. էմինի վերաբերմունքը իր կյանքի փաստերի հանդեպ: Նա կարևոր էր համարում իր այն գործերը, որ կապված էին նրա պատմական առաքելության հետ, իսկ անձնական կյանքի փաստերին սակավ նշանակություն էր տալիս: Հ. էմինը գրում է. «Անթերցողը կարող է իրեն մեղադրել այն բանի համար, որ ինքը հանգամանորեն չի վերապատմել իր անձնական կյանքի իրադարձությունները, որոնց մասին աշխատել է հաղորդել, ըստ հնարավորին, համառոտակիս⁷: Այդ պատճառով էլ նրա մեմուարներում Լրբեմն մեկ տարվա նկարագրությունը կարող է զբաղեցնել մի քանի էջ, իսկ մեկ այլ դեպքում՝ տասնյակ էջեր՝ նայած այն բանին, թե որքանով են դրանք հագեցված նշանակալից իրադարձություններով: Օրինակ, Անգլիայում գտնվելու առաջին տարիները (1753—1755 թթ.), Լրբեմն նա մի կերպ գոյատևում էր, ապրելով պատահական վաստակով (Լրբեմն՝ սօրը երեք կես պենսով), նկարագրված ին ընդամենը ութ էջում: Իսկ 1757—1761 թթ., որոնք նշանավոր են ականավոր գործիչների հետ ունեցած հանդիպումներով, պատմական ճակատամարտերին մասնակցությամբ և կարևոր են նրա ծրագրերի իրագործման իմաստով, նկարագրված են տասնյակ և տասնյակ էջերում:

Կենսագրական փաստերի օգտագործումը, դրանց շեշտումը կախված է այն բանից, թե ով է տվյալ կենսագրության հերոսը, թե ինչի մասին պետք է լինի այդ կենսագրությունը: Այս առումով Հ. էմինի համար սկզբից ևեթ ամեն ինչ պարզ էր և որոշակի: Նա սկսեց մտածել իր հիշողությունների դրսևան մասին և նյութեր հավաքել որոշակի նպատակամղումով՝ թույլ շտալ որպեսզի հայերի մեջ ծնունդ առած ազատագրական շարժումը հանգչի: Գիրքը շարագրելու միտքը նրա մեջ ծագեց երկրորդ անգամ Կալկաթա վերադառնալուց հետո, 1784 թ.: Այդ ժամանակ նա ապրեց հիասթափությունների և դառը մտախռովությունների մի շրջան: Նա վերադարձել էր երկարատև թափառումներից՝ չհասնելով իր քաղաքական ծրագրերի իրականացմանը: Կալկաթայի հայկական համայնքը դեռևս գտնվում էր հոգևոր լճացման և քաղաքական անտարբերության վիճակում: Այն շատ բանով զիջում էր մադրասահայ համայնքին՝ թե՛ իր քաղաքական ակտիվությամբ և թե՛ կուլտուրյունավորական հիմնարկների ստեղծմամբ: «Մադրասահայերը ավելի առաքինի են, — գրել է Հ. էմինը, — քան կալկաթահայերը: Հիշատակության է արժանի առանձնապես Շահամիրը..., որը այժմ հայտնի է տասնյակ հազարավոր հայերի մեջ⁸: Շ. Շահամիրյանի՝ հայրենասերի, մադրասահայերի քաղաքական խմբակի ղեկավորի և 1772 թ. Մադրասում հայկական տպարան հիմնադրողի անվան հիշատակումը պարզ է դարձնում, թե ինչ տեսակի առաքինություն նկատի ունեք Հ. էմինը:

Հ. էմինը գործի մարդ է և չէր կարող հաշտվել նման վիճակի հետ: Նա մտովին կրկին ու կրկին վերադառնում էր իր կյանքի անցքերին, ձգտելով հասկանալ անհաջողությունների պատճառը: Նա իր կյանքի և գործերի մասին պատմում էր ծանոթներին, և, հավանաբար, միայն Վ. Զոնսը չէր, որ

⁷ Նույն տեղում, էջ 465:

⁸ Նույն տեղում, էջ 444:

գտնում էր, թե դրանք արժանի են նկարագրման: «Ով գիտե,— գրել է Հ. էմինը, վերջապես վճռելով գրել հիշողությունների դիրք,— այս դիրքը թե-րևս որոշ չափով լուսավորի նրանց մտքերը: Այն կարող է նրանց օգուտ բե-րել և արթնացնել քնից, բանի դեռ նրանք չեն բացել իրենց աչքերը և չեն հասկացել ազատության իսկական իմաստը»⁹:

Հ. էմինի մեմուարները այն մարդու հիշողությունները չէին, որն արդեն ավարտել էր իր գործերը և անցել հանգստի. դրանք մի նոր փորձ էին շա-րունակելու սկսած գործը: Նրա գրքում լուսավորական խնդիրները դուգակրց-վում են քաղաքական խնդիրների հետ: «Նույնիսկ ծերության տարիներին,— գրում է Ա. Հովհաննիսյանը,— նա չէր կամենում սահմանափակվել լուսա-վորական գաղափարների պրոպագանդով և ուստրաստ էր, անհրաժեշտու-թյան պարագայում, կրկին ակտիվ մասնակցություն ցուցաբերել ազգային-ազատագրական շարժմանը»¹⁰:

Հատկանշական է, որ XVIII դ. Անգլիայում լույս տեսած հսկայածա-վալ մեմուարային գրականության մեջ Հ. էմինի ինքնակենսագրությունը թե-մատիկ առումով յուրատեսակ բացառություն է հանդիսանում: Դոնալդ Շտաուֆերը XVIII դ. անգլիական կենսագրական գրականության վերաբեր-յալ իր մեծածավալ աշխատության մեջ, թեմատիկ դասակարգման ենթարկե-լով կենսագրություններն ու ինքնակենսագրությունները, «հայրենասիրական ինքնակենսագրություններ» վերնագրի տակ նշում է միայն երկու դիրք՝ Հ. էմինի կյանքի նկարագրությունը և ազատության մարտիկ, իռլանդացի Բենեդիկտ Վոլֆ Թոունի մեմուարները:

Ազգային-ազատագրական պայքարի թեման XVIII դ. Անգլիայում իր հիմքերը չունեն, քանի որ Անգլիան ինքն էր հանդես գալիս այլ ժողովուրդ-ների ստրկացնողի դերում: Այս իսկ պատճառով էլ, բնականաբար, այս թե-սան Շտաուֆերի գրքում ներկայացված էր ճնշված ժողովուրդների երկու ներկայացուցիչների՝ անգլերենով գրված ստեղծագործություններով: Սա-կայն, եթե նկատի ունենանք, որ Թոունի մեմուարները գրված են ևղել 1796 թ. և ավարտվել են նրա որդու կողմից և հրատարակվել են միայն 1826 թ. Վաշինգտոնում, ապա պարզ կդառնա, որ XVIII դ. անգլիական մե-մուարային գրականության մեջ ազգային-ազատագրության պայքարի թե-ման ներկայացված էր միայն Հ. էմինի գրքով:

Հետաքրքիր է, որ Հ. էմինի դիրքը հիշատակվում է նաև այն ստեղծագոր-ծությունների թվում (Ֆրանսիական հեղափոխության առաջնորդների մեմու-արները, Գոգվինի հուշերը Պիտի մասին և այլն), որոնցում, Շտաուֆերի բնո-րոշման համաձայն, «անձի ազատագրությունը՝ արտահայտված տեսության մեջ կամ ցուցադրված գործողության մեջ, կապվում էր ազատության գաղա-փարի՝ որպես քաղաքական սկզբունքի հետ», և որոնք վկայում են, թե սոր-քան էր հզորացել ազատության գաղափարը XVIII դ. կենսագրական գրու-կանության մեջ»:

⁹ Նույն տեղում, էջ 484:

¹⁰ А. Р. Иоаннисян, *ibid.*, աշխ., էջ 315:

¹¹ Stauffer D., *The Art of Biography in 18th century England*, London, 1941, էջ 183.

Յավոթը, Շտաուֆերը սահմանափակվել է միայն Հ. էմինի ազդեցությունը և նրա գրքի թեման նշելով¹²։ Սակայն մի քանի սողով տրված այս մատենագիտական տեղեկանքը ևս ցույց է տալիս, որ Հ. էմինի դիրքը ասղիացի ուսումնասիրողի կողմից դիտվում է որպես XVIII դ. անգլիական մեմուարային գրականության եզակի նմուշներից մեկը։

Հայանաբար, մեմուարների ընդգծված հայրենասիրական թեման ինքը ստիպել է Հ. էմինին առաջնությունը տալ «կյանք և արկածներ» ձևին, այսինքն՝ լինելով տարածված այն կարծիքից, թե «մարդը հավասար է իր արարքներին», նկարագրել իր կյանքի գործերը։ Դժվարությունն այն էր, որ Անդրլիայում մինչև XVIII դ. 70-ական թվականները ինքնակենսագրության ժանրի հեղինակությունը բավականաչափ բարձր չէր, և քիչ էին այն ինքնակենսագրությունները, որոնց կարելի էր ընդօրինակել։ XVIII դ. ինքնակենսագիրների մեջ չկան Դեֆո, Ռիչարդսոն, Ֆիլդինգ, Բուրնսոն, Ջեսսերֆիլդ և այլն, մինչդեռ XIX դ. իրենց մեմուարները թողեցին Բայրոնը, Սկոտը, Մուրը, Դարվինը, Կարլայլը և ուրիշներ։ Ս. Ջոնսոնը, որ շատ կենսագրությունների հեղինակ էր, դեռևս չհրատարակած ոչնչացրեց իր ինքնակենսագրության ձեռագիրը։ Շրջադարձային կետ հանդիսացավ էդվարդ Իրեոնի «Ինքնակենսագրությունը», որը հրատարակեց լորդ Շեֆիլդը, 1796 թ.։

Ընդօրինակման արժանի ինքնակենսագրությունների բացակայությունը մասնակիորեն լրացվում էր գեղարվեստական գրականությամբ։ Հ. էմինի տրամադրության տակ կային կենսագրական, ճանապարհորդական և արկածային վեպերի նշանվոր նմուշներ։ Ստույգ հայտնի է, որ նա կարդացել է Դեֆոյին, Սվիֆթին, Դենելոնի «Տելեմաքը», Ադիսոնի «Ռասելլան» և այլն։

XVIII դ. վեպի դարպասումը էապես ազդեց կենսագրության արվեստի վրա։ Ուկրեմ վիպասանները որպես օրինակ վերցնում էին կենսագրության գոյություն ունեցող ձևը։ Կենսագրությունից նրանք փոխ էին առնում մանրամասնումը, փաստագրությունը, խորհրդածությունները և բարոյախոսությունները, տարեթվերի, տեղանունների թվարկումը և այլն։ Դեֆոն մեմուարիստներին ընդօրինակում էր նույնիսկ իր վեպերի վերնագրերում՝ «Ռոբինզոն Կրուզոյի կյանքը և դարձանալի արկածները», «Գնդապետ Ջեկի անսովոր արկածների պատմությունը» և այլն։ Նա ինքը սուրբ է տվել կենսագրության ժանրին, այն «գտագործելով մամանակակից քաղաքականության և դիվանագիտության հարցերի քննարկման համար։ Վիպականացված կենսագրությունները պատմելու շատ հարմար ձև էին։ Այդ վեպերի հեղինակները հանդես էին գալիս սոսկ որպես անհայտ ծագման մեմուարների ձեռագրերի հրատարակիչներ և մեկնաբաններ։

Մինչև XVIII դ. երրորդ զասր շուններ իր տարեգրությունը XVIII դ. ընթացքում կատարված սոցիալական տեղաշարժերը բայց առ քայլ փոխեցին մեմուարային գրականության դեմքը։ Այդ գրականության մեջ ներթափանցեց ազատամտության ոգին։ Աստիճանաբար տեղի էր ունենում կենսագրության դեմոկրատացումը։ Առևտրական միջին դասերը, յոմենները, արտիստները և ուրիշներ դառնում էին կենսագրությունների հերոսներ։ Իր ինքնահաստատման համար երրորդ դասի մղած պայքարը դրսևորվեց նաև գրականության այդ քննադատումով, ինչպես չեն կարող գրվել սովորական մարդկանց կենսագրու-

¹² Նույն տեղում, էջ 176։

ւափելի ախտերից: Կենսագրության դիդակտիկ ֆունկցիայի զաղափարը ակրն-հայտ արտահայտված էր Պլուտարքոսի «Կենսագրություններին» մասին Գուլդսմիթի գրախոսականում (1762 թ.): Այդ գրախոսականում Գուլդսմիթը գրել է. «Պլուտարքոսի ժամանակներից ի վեր կենսագրությունը համարվել է զրական ամենաօգտակար տեսակներից մեկը... Կիդակտիկ շնորհիվ նա հնարավորություն է տալիս խորհուրդ տալ առանց վիրավորելու: Նա ոչ միայն վերացնում է իրատի շոթությունը և դոգմատիկ ոգին, այլև մարդկանց, նրանց գործերն ու դրանց արդյունքները պատկերում է ամենաուսանելի ձևով»¹⁶:

Պրոֆեսիոնալ այդ դիդակտիկում վերաճել էր Ստիլի և Լեդսոնի «Հանդիսատես» և «Շատախոս» հանդեսներից: Լեդսոնի բարոյախոսական ակնարկները հենվում էին կենսագրական փաստերի կամ անեկդոտների վրա: Զոնսոնը այդ մեթոդից օգտվում էր իր կենսագրություններում՝ «Անբանի» և «Պորտաբույծի» մեջ: Հավատարմ կենսագրության դաստիարակչական ուժի հանդեպ անկեղծ էր և տարածված: Ուրիշների արատները ընթերցողին օգնում են խոստափելու սխալներից: Այլոց առաքինությունները օգնում են լինել առաքինի: Դիդակտիկ կենսագրությունների պաշտպանության տեսական հիմնավորումներ գտնում ենք Ս. Զոնսոնի մոտ: Նա մեծ ազդեցություն է թողել XVIII դ. վերջի կենսագրական ժանրի վրա: Զոնսոնը պնդում էր, որ կենսագրությունը պետք է խրատական նպատակներ հետապնդի: Բայց կենսագրության էթիկական նպատակն այն է, որ բարոյախոսությունը բնականոն կերպով և օրդանայես բխի ճշմարիտ կերպով վերարտադրված անհատի կյանքից: Կենսագիրներից պահանջվում էր, որպեսզի կյանքի նկարագրությունը համապատասխանի իրականությանը: Ս. Զոնսոնը գրել է. «Յուրա-յանչյուր կենսագրության արժեքը նրա ճշմարտացիության մեջ է: Դա մարդկային լինավորության նկարագրություն է՝ ամբողջությամբ առած: Եթե կենսագրությունը արժանահավատ չէ, այն ոչինչ չարժեք... Որոշ մարդիկ պատմում են այն մասին, ինչ իրենք մտածում են, փոխանակ պատմելու այն, ինչ գիտեն»¹⁷:

Մեմուարների հեղինակները ձգտում էին ամեն կերպ պահպանել իրականության այդ զգացումը: Նրանք նկարագրում էին մարդկանց արտաքինը, կոնկրետ մանրամասները, նշում ժամանակը, տեղը, վկայակոչում էին իրենց իրավիճության աղբյուրները, մեջբերում էին փաստաթղթեր, նամակներ¹⁸: Այսպես, Մարիա Ստյուարտի կենսագրության առաջաբանում նրա հեղինակ էլիզա Հայվուդը հաղորդում էր, որ իր պատմվածքը ոչ թե սիրային-արկածախնդրական վեպ է, այլ ճշմարիտ պատմություն¹⁹: Մարիա Ստյուարտի մի այլ կենսագիր գրել է. «Մարիա Ստյուարտի կյանքը այնքան անսովոր և ճակատագրական բան է բովանդակել, որ նրա պարզ վերապատմման անգամ կթվա ոչ

¹⁶ "Plutarch's Lives.", "Evening Post", London, 1792, մայիս:

¹⁷ Մեմուարային գրականության մասին Ս. Զոնսոնի հայացքների յիսկատար շարադրանքը մենք գտնում ենք նրա հոդվածներում («Rambler», 13. X. 1756, № 60 և «Jdler» 24. XI. 1759, № 84):

¹⁸ Նեշի մասին թատի գրած կենսագրության առթիվ իր գրախոսականին Գուլդսմիթը տվել էր հետևյալ վերնագիրը. «Երկարոջ Նեշի կյանքը՝ քաղված գլխավորապես նրա սեփական նամակներից»:

¹⁹ Haywood E., Mary Stuart, Queen of Scots, London, 1725, էջ 262:

ուրազմանալի, քան թե ուղած արկածախնդրային վեպի սյուժեն»²⁰, Քոլի Սիբերը գրել է. «Կենսագրի ծառայությունն ամենևին էլ այն չէ, որպեսզի սնհանգստանա իր հերոսի բարոյականության կամ կայունության մասին: Ճշմարտացիությունը՝ ահա միակ բանը, որի համար նա պետք է անհանգստանա»²¹:

Նման դատողություններ մենք գտնում ենք նաև Հ. էմինի ինքնակենսագրության մեջ: Նա մտավախություն է հայտնում, թե 20 տարի հետո, երբ ինքը կմահանա և չեն լինելու նաև իրեն ճանաչող մարդիկ, իր մեմուարները կընկալվեն սոսկ իբրև սովորական արկածախնդրական վեպ²², Իրագեկելով Անդրե-կովկասում ունեցած իր վարմանալի արկածներից մեկի մասին, Հ. էմինը, կանխազգալով հնարավոր անվստահությունը և ցանկանալով ցրել այն, գրում էր. «Ընթերցողը, իհարկե, չի հավատա վերը նկարագրված դեպքի հավանականությանը: Դա ավելի շուտ հիշեցնում է «Հազար ու մի գիշերվա» հեքիաթներից մեկը, քան թե մի ճշմարիտ պատմություն»²³, Արդեն առաջաբանում Հ. էմինը կատեգորիկ ազդարարում է, թե ինքը «ավելի գե-բաղասում է սրտից խոցված լինել, քան ոտնահարել ճշմարտությունը»²⁴, Մի այլ տեղ նա գրում է. «Բարի ընթերցողը կարող է համոզվել, որ էմինն ասում է այն, ինչ մտածում է, և ասում է միայն ճշմարտությունը, որը առաքինությունների թագուհին է»²⁵, Կրկնելով Ջոնսոնին՝ նա գրել է. «Կենսագրության գեղեցկությունը ճշմարտությունն է»²⁶:

Ժամանակագրայնությունը, փաստագրայնությունը — ահա XVIII դ. համ-րնդհանուր ճանաչում գտած այն միջոցները, որոնց օգնությամբ մեմուարներում ապացուցվում էր պատմվածքի ճշմարտացիությունը: էմինը անշեղորեն հավատարիմ է այդ ավանդույթին: Նա իր պատմումը ամրապնդում է տարե-թվերով, ճշգրիտ թվերով, տեղանուններով, անձնանուններով և այլն: Մենք նկատում ենք, որ նրա կյանքում որևէ իրադարձություն, որքան ավելի զար-մանալի է (բարձրաստիճան օտարաբերացու հետ ծանոթանալը, վտանգա-վոր արկածը և այլն), Հ. էմինը այնքան ավելի բծախնդրորեն է դիմում ման-րամասների ընդգրկմանը, հաղորդում է ծանոթների հասցեները, զործողու-թյան տեղն ու ժամանակը և այլն: Նա միշտ նշում է դրամի այն գումարը, որ ինքն ստացել է կամ ստիպված է եղել ծախսել: Մեմուարներում միշտ նըշ-վում են այն նավերը, որոնցով նա ճանապարհորդել է, հաղորդվում են ոչ միայն քաղաքների, այլև այն գյուղերի, ամրոցների, վանքերի անունները, որոնցում ինքը եղել է:

Հ. էմինի մեմուարներում փաստագրայնությունը ապահովվում է նաև նամակների մեջբերմամբ: Այսպիսի պարագայում նա ուղղակի թե անուղ-ղակի, պարտավոր է Ռիչարդսոնին: Իր «Լեդի Ն-ի» փառաբանված Պամելի մե-մուարները աղմուկ հանած վեպում Ռիչարդսոնը դիմել է մեմուարային ձե-

²⁰ Feebain G. The Laife of Mary Stewart, London, 1779, էջ 70.

²¹ Colly Cibber, The Character and conduct of Cicero, London, 1747, էջ 278:

²² "Adventures of Emlin", էջ 264:

²³ Նույն տեղում, էջ 264:

²⁴ Նույն տեղում, էջ XXIX:

²⁵ Նույն տեղում, էջ 426:

²⁶ Նույն տեղում, էջ 465:

վին, նա կենսագրական ժանրի վրա ազդեցություն է գործել նամակագրական ձևի և հոգեբանական վերլուծության ներմուծման միջոցով:

Իր մեմուարներում Հ. էմինը լայնորեն օգտագործում է նամակները, բայց նրա մոտ նամակները պատումի մեջ են մտցվում ոչ թե հոգեկան ապրումների ցուցադրման համար, ինչպես դա Ռիչարդսոնի և նրա հետևորդ մեմուարիստների մոտ է, այլ այն բանի համար, որպեսզի պատումին հաջորդվի արժանահավատություն, փաստայնություն: Այսպես, օրինակ, կոմս Նորտումբերլանդին գրած նամակում Հ. էմինը խոսում է Անգլիա կատառած իր ուղևորության նպատակի մասին և խնդրում է օգնել իրեն՝ ընդունվելու Վուլիչի ռազմական ակադեմիան: Նամակը, մի կողմից, ծառայում է պատումի զարգացմանը. նամակից կոմսը իմանում է Հ. էմինի, նրա ծրագրերի, հույսերի, գիտելիքների ծառայի և այլնի մասին: Մյուս կողմից, նամակը վկայում է տեղի ունեցածի իրական լինելու մասին, այն մասին, որ նա իսկապես ծանոթացել է Նորտումբերլանդի հետ: Վ. Պիտ Ավագին՝ Անգլիայի պրեմիեր-մինիստրին, գրած նամակում Հ. էմինը բարձրացնում է Հայաստանի ազատագրության հարցը: Կախթի թագավոր Հերակլին հղած նամակում նա իր ծառայություններն է առաջարկում վրաց զորքը վարժեցնելու համար, շարադրում է Ռուսաստանի հովանու ներքո հայ-վրացական համագործակցության իր պլանը՝ թուրք-իրանական ստրկացնողների դեմ պայքարելու համար: 1762 թ. հունվարին Ռուսաստանից լորդ Լիթլտոնին հղած նամակում նա խորհուրդներ է հարցնում ապագա հայկական անկախ պետության արմատական կազմակերպական հարցերի վերաբերյալ: Նամակների այսօրինակ օգտագործումը ասպացուցում է Հ. էմինի հարազատությունը վաղ շրջանի անգլիական ինքնակենսագրության տեխնիկային, որովհետև Ռիչարդսոնից հետո նամակագրական ձևին ավելի ու ավելի դիմում էին մարդու ներաշխարհի բացահայտման համար:

Հ. էմինի նամակները գրական հնարանք չեն, նրանք մտացածին չեն, այլ իրական փաստաթղթեր: Նա իր մեմուարներում մտցրել է ուրիշներից ստացված միայն այն նամակները, որոնք պահպանվել են իր մոտ կամ թե իր այն նամակները, որոնց պատճենները պահպանվել էին: 1913 թ. Հ. էմինի գրքի երկրորդ հրատարակության ժամանակ նրա ծոռ Ամի Ապկարը կարողացել է Անգլիայից ստանալ լեդի է. Մոնտեզյուին և այլ անձանց Հ. էմինի հղած քսան նամակների լուսանկարապատճենները, որոնցում հիշված է Հ. էմինի անունը: Այլ փաստաթղթերի և պատմական վկայությունների հետ միասին դրանք ղետեղելով Հ. էմինի գրքի երկրորդ հրատարակության մեջ, նա ցանկացել է դրանով իսկ պաշտպանել իր նախնու անունը թյուր մեկնաբանություններից, քանի որ մեմուարիստի շատ արկածներ և ծանոթություններ սերունդներին կարող էին թվալ ոչ ճշմարտանման և նույնիսկ՝ ֆանտաստիկ: Դրանք հաստատում են Հ. էմինի բերած նամակների իսկությունը, ինչպես նաև նրա նկարագրած իրադարձությունների ճշմարտացիությունը: Շատ հետաքրքիր փաստաթուղթ է, օրինակ, Չարլզ Ստենհուպին Հ. էմինի գրած նամակը, որ նա հղել է Կանկալի ծովախորշից. այդ նամակում նկարագրված է անգլիական զորքերի արշավանքը ֆրանսիական առափնյա շրջանների վրա 1758 թ. արշավանք, որին մասնակցել էր նաև Հ. էմինը: Նամակը ստացող Չարլզ Ստենհուպը այն տվել է լեդի Մոնտեզյուին, որի արխիվում էլ այն պահպանվել է: Ամի Ապկարը՝

սույն նամակի կողքին ղեկավարել է քաղվածքներ՝ կապիտան Հոուի նամակառկայանից, որ սրահակալում է Բրիտանական թանգարանում, ինչպես նաև Ֆոտիկսյուի «Բրիտանական բանակի պատմությունից» և Կոբլերի «Անգլիան Քոթնամյա պատճառով» աշխատությունից: Իրանք հաստատում են այն իրադարձությունների և փաստերի իսկությունը, որոնք բերված են Հ. Հմինի նամակում:

Բայց մեզ համար առավել հետաքրքիր է Հ. Հմինի հաշվետվության պրական ձևավորումը, անգլիացիների անփառունակ արշավանքի նկարագրման ողջ ծաղրական տոնը, որտեղ բացահայտվել է նրա երգիծանքը թե իրադարձությունների և թե դուքս Մալբորոյի ղեկավարական գործունեության նկատմամբ: Արշավանքից վերադառնալուց հետո լորդ Լիթլտոնին հղած նամակում Հմինը գրել է. «Ձերս-րշավանքը, որն այժմ շատերն անվանում են «ծովահեն ասպատակություն», դիտելու կամ ուսումնասիրելու արժանի ոչ մի բան չունենալ»²⁷:

Լիթլտոնին ուղղված նամակը՝ գրված արդեն Անգլիայում, և Ստենհուպին ուղղված նամակը՝ Կանկուլի ծովախորշից, հաղորդում էին իրադարձությունների ականատեսի անմիջական տպավորությունները, ականատես, որը միաժամանակ հաղորդում էր արշավանքի այլ մասնակիցների (նախապես է և բարձրագույն գինվորական աստիճան ունեցողների, ինչպես, օրինակ, գեներալ Էլիոտի) տրամադրություններն ու տպավորությունները:

Հապճեպ ավարտված, անարդյունք արշավանքի նկարագրության այդ ծաղրական, փայլուն սեղմ տոնը ժամանակին չի վրիպել Ամի Ասկարի ուշադրությունից: Նա մեծ նմանություն է նկատել Հ. Հմինի և երգիծական պատմվածքի իսկական խոշոր վարպետ Թեքերեյի պատմելիական միջև: Ամի Ասկարը մեմուարներում տեղադրել է նաև մի հատված Թեքերեյի «Վիր-գինցիներ» պատմական վեպից, ուր վեպի հերոս Հարրի Ուորինգթոնը, որ մասնակցել էր Սեն Մալոյի արշավանքին, նամակ էր հղել տուն՝ արշավանքի նկարագրությամբ:

Թեքերեյն արդյո՞ք կարդացել էր Հ. Հմինի մեմուարները. այդ մասին ուղղակի տեղեկություն չունենք: Հայտնի է, որ իր պատմական վեպերը գրելիս, պատմական աշխատությունների և փաստաթղթերի հետ միասին, նա կարդում էր նկարագրող դարաշրջանի մարդկանց բաղմամբիվ հուշագրություններ և նամակներ, բանի որ, նրա կարծիքով, անցած ժամանակների այդ «կենդանի վկայությունները» անհամեմատ ավելին էին տալիս դարաշրջանի բարքերի ուսումնասիրման և պատմական իրադարձությունների ոչ պաշտոնական գնահատականի հետ ծանոթանալու համար, քան պաշտոնական պատմագրությունը: Թեքերեյի հերոս Հարրի Ուորինգթոնը Ամերիկայից եկած և Սեն Մալոյի արշավանքին մասնակցած նույնպիսի մի կամավոր էր, ինչպիսին Հնդկաստանից եկած կամավոր Հ. Հմինը: Որոշակի նմանություն կա նկարագրությունների ու փաստերի ընտրության և դրանց ծաղրական մեկնաբանության միջև: Ընդ որում, երկու դեպքում էլ ծաղրը հավասարապես տարածվում էր և՛ անգլիացիների, և՛ ֆրանսիացիների վրա:

Ինքնակենսագրության մեջ բերված Հ. Հմինի բոլոր նամակները, չնայած և պրական երկեր չեն, բայց զիջարվեստական ներդրություն մեծ

²⁷ Նույն տեղում, էջ 98—99:

ուժ ունենալ Դրանք պետք է արժանահավատություն հաղորդեն վաղուց անցած դեպքերին, բայց դրանցում, այսպես թե այնպես, բացահայտվում է նաև հեղինակի անձը, նրա մտածելակերպը, հայացքները, բարոյական սկզբունքները, նպատակները:

Վիպասանների և հատկապես Ֆիլդինգի աղղեցությամբ կենսագրության մեջ ներթափանցել է դարաշրջանի բարքերի և կենցաղի նկարագրությունը: Դրանք օգնում էին հասկանալու հերոսի բնավորությունը և նրա արարքները: Հ. Հմինը, սակայն, հանդես չի գալիս սոսկ բարքերի դիտողի դերում: Բարքերի և կենցաղի էպիգոգիկ նկարագրությունները նրա մոտ ծառայում են որոշակի քննադատական բանավեճային նպատակների և հանդիսանում են միայն ֆոն՝ նկարագրվող կյանքի և գործունեության համար: Այդ իմաստով քննող է, որ Անգլիայում ութ տարի ապրած Հ. Հմինը շատ քիչ բան է պատմել անգլիացիների բարքերի ու կենցաղի մասին: Մենք, սրինակ, ոչինչ չգիտենք է. Մոնտեզյուի տան կյանքի դրվածքի մասին. տուն, որտեղ նա հաճախ էր լինում, կամ էլ՝ նրան լավ ծանոթ ուրիշ դեմքերի մասին, հավասարապես ոչինչ չգիտենք աշխարհիկ հասարակության բարքերի, կամ, ասենք, բանակային միջավայրի և ռազմական ակադեմիայի մասին, որոնք նրան ծանոթ էին: Կենցաղագրական տեսարաններ հանդիպում են նրա գրքի այն մասերում, որտեղ նա պատկերել է իր թափառումները Անգրկովկասում, Պարսկաստանում, Թուրքիայում և, որպես կանոն, դրանք կատարում են քննադատական, մերկացնող ֆունկցիա:

Բարքերի ցուցադրման համար անփոխարինելի էր անեկդոտը: Անեկդոտները հաստատում էին կյանքի ճշմարտությունը: Նրանք անիմաստ էին, եթե թվում էին հնարված: Մինչև 70-ական թվականները անեկդոտները զխափության հանդիպում էին դերասանների և կոմիկների կենսագրություններում: Իր «Ապոլոգիայում»²⁸ ռլի Միրեն օգտագործել է բազմաթիվ թատերական անեկդոտներ: Անեկդոտներով լի էին Գարրիկի, տիկին Բելինիի և ուրիշների կենսագրությունները: Առաջին մարդը, որը նշեց անեկդոտներով հարածուն հրապուրվելը, Հ. Ուոլպոլն էր: «Զի եղել ժամանակ, — գրել է նա, — որ անեկդոտները, հատկապես զրական, կարգացվեն ավելի մեծ հետաքրքրությունով, քան այժմ»²⁹:

Հ. Հմինի Անգլիայում գտնվելու ժամանակը համընկավ անեկդոտներով հրապուրվելու առաջին շրջանին: Գրական և թատերական անեկդոտներով Մոնտեզյուի սալոնում փայլում էին Մ. Զոնսոնը, Դ. Գարրիկը, Զ. Ռեյնոլդսը և ուրիշներ: Հ. Հմինը, որ լինում էր այդ սալոնում, չէր կարող խուսափել նման «հովերից» է. Մոնտեզյուի՝ ամուսնուն ուղղված նամակներից մեկում մենք հանդիպում ենք հաղորդման այն մասին, որ Հմինը վերադարձել է պատերազմից՝ և որ ռեալի է անեկդոտներով Պրուսիայի թագավորի մասին³⁰: Հետագայում իր հիշողությունների մեջ Հ. Հմինը մեջբերել է այդ անեկդոտներից մեկը. «Ֆրիդրիխը մի անգամ ձի նստելիս սկսեց հայհոյել իր զաչնակցին՝ Քեմբերլենդի դուքսին, Սաքսոնիայի ֆելդմարշալից կրած պարություն համար: Նրա անգլիացի հեծյալ սպասավորը շկարողա-

²⁸ Colly Cibber, An Apolog for his Life, London, 1740.

²⁹ Walpole II., Royal and Noble authores ("Annual Register", London, 1758).

³⁰ "Adventures of Elin", էջ 126:

զավ կույ տալ վիրավորանքը և, շոյելով նժույգի բաշը, լսելի ձայնով փրս-
փրսաց այսպես, «էհ, խեղձ ձի, եթե դու միայն կարողանայիր խոսել, դու նո-
րին Պրուսական Մեծությունը կասեր, թե այն ո՞վ էր, որ առաջինը ճո-
ղուրեց մարտադաշտից, քանի որ հենց դու ևս այն նժույգը, որը առաջինը
ճողուրեց»³¹։

Բնականաբար Հ. էմինը, որի մեջ դեռ այն ժամանակներից ի հայտ
էր ևկել ճաշակ անեկդոտների հանդեպ, իր մեմուարներում գիմում է գրա-
կան այդ հղանակին՝ որպես բնավորությունների և բարքերի պատկերման
միջոցի³²։

Դարավերջին վեպի առավել զարգացած ձևը իր պատկերների, բնավո-
րությունների և երկխոսությունների ավելի ունակաբան մշակմամբ թույլ
էր տալիս կենսագիրներին՝ իրենց ավելի անկախ զգալ շորուցամաք փաս-
տաթղթերից, դրանք փոխարինելով կենդանի պատկերների, զրույցների
նկարագրությամբ։ Հ. էմինը օգտագործել է նաև այդ միջոցները, Իր ինքնա-
կենսագրության մեջ նա մտցրել է ոչ քիչ թվով զրույցներով ուղեկցվող կեն-
դանի պատկերներ։ Դրանք ամենից առաջ այս կամ այն անձանց հետ նրա
ունեցած հանդիպումներն են, որոնք խաղացել կամ կարող էին խաղալ կա-
րևոր դեր նրա ճակատագրում, օրինակ, Կալկաթայում նավապետին կատա-
րած այցելությունը, որին Հ. էմինը խնդրել էր իրեն տանել Լևոդիա, կամ
հանդիպումները կոմս Նորտունբերլենդի հետ՝ նրա Լոնդոնի առանձնա-
տանը, Պրուսիայի թագավորի հետ՝ Յոթնամյա պատերազմի ժամանակ,
Օդերի Ֆրանկֆուրտ գնալիս, վրաց թագավոր Հերակլի հետ՝ Խիֆիսում և
այլն։ Լեյպպիսի էպիգոններում երկխոսությունը դրական այն միջոցն է, որը
հնարավորություն է տալիս հարություն տալ ծանոթության կենդանի պատ-
կերին։ Լեյպպիսի երկխոսությունները իրենց վրա կրում են իմաստային բավա-
կանին բարդ բեռ։ Դրան օրինակ կարող է ծառայել այն երկխոսությունը, որը
տեղի էր ունեցել թարգմանչի՝ Ֆրիդրիխ Դ-ի մոտ անգլիական ներկայացու-
ցիչ Միտլերի միջոցով, Թագավորի այն հարցին, թե ձրնքն ո՞վ է, Հ. էմինը
պատասխանեց. «Իս մարդ եմ»։ «Ի՞նչ մարդ ես դու, ինչպե՞ս է քո անունը»։
«Իմ անունը էմին է, ես հայ եմ»։ այնուհետև Ֆրիդրիխը հարցրեց «Ուս այն
մա՞րդն է, որին հովանավորում է Քեմբերլենդի դուքսը»։ Եվ իմանալով,
որ դա այդ մարդն է, հարցրեց. «Մի՞թե նա չգիտե, որ ևս թույլ չեմ տալիս
կամավորներ վերցնել»։ Պատասխան. «Գիտեմ, բայց եթե նորին Մեծու-
թյունն իմանար, թե քանի ամիս եմ ես ծովով ու ցամաքով ճամփա կտրել,
որպեսզի արյուն թափեմ նրա մոտ ծառայելիս, նա չէր արգելի»։ Լեյն ժամա-
նակ թագավորն ասաց. «Դա համես քաջն է։ Լեյ, եթե ես այդպիսի մարտա-
կան ոգու տեր 10.000 մարդ ունենայի»³²։

Պրուսիայի թագավորի հետ ունեցած երկխոսությունը հավաստում է հե-
տևյալը. 1. էմինը ցանկացել է ուսումնասիրել ռազմական արվեստը և, ծով
ու ցամաք կտրելով, հասել է մարտի վայրերը և մասնակցել մարտերին,
2. Կամավորներին թույլ չէր տրվում մասնակցելու ռազմական գործողու-
թյուններին և այդ պատճառով էլ Հ. էմինին շուտով հետ են ուղարկել,

³¹ Նույն տեղում, էջ 120.

³² Նույն տեղում, էջ 115—116.

3. Հ. էմինի հանդիպումը Ֆրիդրիխ II-ի հետ իսկապես տեղի էր ունեցել 4. Հ. էմինի նկատմամբ Քեմբրիջի դուքսի հովանավորությունը հանրահայտ էր Բացի այդ, Հ. էմինը, որ խուսափում է ինքնազոհասանքից, ժասանաս առ ժասանակ օգտվում է նման երկխոսություններից, որոնցում իր անձնավորության և դործողությունների հասցեին ուղղված հավանության խոսքերը զրկված են զրուցակցի շուրթերում: Ջոնսոնը գրել է, որ յուրաքանչյուր մարդու շայացքները պետք է իմացվեն հենց իրենից: Ինչ վերաբերում է նրա դրժերին, ապա այստեղ ճիշտ կլիներ չափատալ ուրիշների վկայություններին:

Շատ դիպքերում կենդանի պատկերներում բացահայտվում է Հ. էմինի մտածելակերպը: Այդ պատկերների ծառայում են այն բանին, որպեսզի կրկին ու կրկին շարադրվեն այն գաղափարներն ու ծրագրերը, որոնք փայփայել է մեմուարիստը: Գաղափարական առումով ստավել նշանակալից կենդանի պատկերների թվին է պատկանում Ջինիս դյուդո բնակիչների հետ Հ. էմինի ունեցած հանգիստի տեսարանը՝ Հայաստան կատարած նրա առաջին անապարհորդության ժամանակ: Երիտեղու համար մնալով արևմտահայ այդ գյուղում, Հ. էմինը վրդովվում է գյուղացիների ստրկական հնազանդությունից, գյուղացիներ, որոնց ծայր աստիճան վախեցրել էին Հ. էմինի համարժակ խոսքերը: Երբ Հ. էմինը բացակայել է, «Ինչո՞ւ դուք քրիստոնյաներդ դիմադրում եք, երբ ձեզնից որևէ մեկը պինդոր է դառնում: Իսկ ո՞ւր դուք շունք ձեր թաղավորը: Իսկ ո՞ւր դուք ազատ եք»: Գյուղացիները հնազանդորեն պատասխանել էին. «Պարոն, մեր տերը Քրիստոսն է և մեր ազատությունը ձեռք է բերվելու հանդերձյալ կյանքում»: Մինչդեռ Հ. էմինը գործողության ու պարարի էր կոչում:

Այսպիսով, հալ ժողովրդի ազատագրության և լուսավորության գաղափարների քարոզի, ինչպես և իր շայրենասիրական գործունեության պատումի շատար Հ. էմինը դիմել է գեղարվեստական այնպիսի արտահայտչական ժանրերի, որոնք համապատասխանում էին նրա գրքի բովանդակությանը և կիրառվու առավել առաջնորդական գաղափարներով տոգորված լուսավորական գրականության մեջ: Այդպիսին էին XVIII դ. անգլիական գեղարվեստական արձակը և մեմուարային գրականությունը, որոնց Հ. էմինը մոտիկից առնչվեց և որոնց ազդեցությունը բացահայտ է նրա հուշագրություններում:

ТРАДИЦИИ АНГЛИЙСКОГО МЕМУАРНОГО ЛИТЕРАТУРЫ И АВТОБИОГРАФИЯ ОВСЕПА ЭМИНА

МАРГАРИТ АСЛАНЯН

Резюме

В 1792 г. в Лондоне были изданы мемуары Овсепя Эмина: «Жизнь и приключения Джозефа Эмина, армянина, написанные на английском языке им самим». Книга насыщена идеями английского просвещения и, как показывает сопоставительное изучение, тесно связана с традициями английской мемуарной литературы и просветительской прозы XVIII в.

По форме мемуары Эмина близки к ранним образцам английской автобиографической литературы, большинство которых были о деяниях. Эмин написал свои мемуары потому, что сознавал общенациональное значение своей деятельности. Его позиция отразилась и в подборе фактов, и в композиции книги. В огромной массе мемуарной литературы, вышедшей в Англии в XVIII в., книга Эмина стоит особняком как редкий образец «патриотической автобиографии». Пожалуй, ничто так не сближает мемуары Эмина с английской просветительской прозой, как поучительная цель. Согласно этическим теориям XVIII в., биография должна была помочь читателю подражать добродетели и избежать порока. Первейшим условием осуществления дидактической функции биографии была ее достоверность. Хроникальность, фактографичность, документальность и т. д.—это те общепринятые в XVIII в. художественные приемы, при помощи которых в мемуарах доказывалась достоверность повествования. Эмин неукоснительно придерживается этой традиции.